ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ 2020–2024 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՎԱՆԴԱԼԻԶՄԻ ԵՎ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և
Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող,
ԳԿՄԿ պատմության, քաղաքագիտության և
միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
lilit.hovhannisyan@isec.am

ԱՐԱՄՈ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատմության, քաղաքագիտության և
միջազգային հարաբերությունների ամբիոնի մագիստրանտ
aramo.hakhverdyan@gmail.com

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-295

Համառոտագիր

Արդի շրջանում թվային տեխնոլոգիաները կարևոր դեր են խաղում պատմամշակութային զեղծարարությունները և վանդալիզմը բացահայտելու, հանրային կարծիքի մանիպուլացումը կանխարգելելու, ինչպես նաև պատմամշակութային ժառանգությունը պաշտպանելու և պահպանելու գործում: Դրանց դերն ու նշանակությունն ավելի է մեծացել 2020–2023 թթ. ռազմաքաղաքական իրադարձությունների արդյունքում, երբ Արցախի Հանրապետության տարածքն ամբողջությամբ հայտնվել է Ադրբեջանի վերահսկողության տակ: Օգտվելով իր համար բարեպատեհ իրադրությունից՝ ադրբեջանական իշխանությունները նոր թափով շարունակում են հայկական Արցախի պատմամշակութային ժառանգության համակարգված ոչնչացումը, յուրացումը, աղավաղումը, աղվանականացումը: Այս պայմաններում ադրբեջանական վանդալիզմի քաղաքականությունը մերկացնող և հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացումը փաստող ամենաազդեցիկ գործիքներն են հենց թվային տեխնոլոգիաները, մասնավորապես՝ արբանյակային լուսանկարումը, վիրտուալ արխիվները, արհեստական բանականությունը և միջազգային մոնիթորինգային հարթակները: Դրանք թույլ են տալիս ոչ միայն արձանագրել ադրբեջանական վանդալիզմի փաստերը, այլև բացահայտել զեղծարարության և հայկական մշակութային ժառանգության դեմ ուղղված հանցավոր գործունեության բոլոր հետևանքները:

Սույն հոդվածում հանգամանորեն ներկայացված են ժամանակակից թվային տեխնոլոգիաների հնարավորությունները ադրբեջանական զեղծարարության և վանդալիզմի քաղաքականության դեմ պայքարում՝ սկսած վանդալիզմի փաստերի արձանագրումից մինչև միջազգային կազմակերպություններում դրանց վերաբերյալ համապատասխան քայլերի

ձեռնարկում: Նաև արժևորված են ադրբեջանական զեղծարարությունը և վանդալիզմի քաղաքականությունը բացահայտող թվային հարթակների դերն ու կիրառվող գործիքների արդյունավետությունը:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ Արցախի Հանրապետություն, Նախիջևան, Ջուղայի խաչքարեր, ադրբեջանական վանդալիզմ, արբանյակային նկարահանում, զեղծարարության քաղաքականություն, թվային հարթակ, թվային տեխնոլոգիաներ, հայկական պատմամշակութային ժառանգություն, մոնիթորինգ, փաստագրում:

DIGITAL TECHNOLOGIES AS A TOOL FOR UNVEILING AZERBAIJANI POLICY OF VANDALISM AND FORGERY ABOUT ARMENIAN CULTURAL HERITAGE IN 2020–2024

LILIT HOVHANNISYAN

Institute of History of the National Academy of Sciences of the RA,
Department of the History of the Armenian Question and the
Armenian Genocide RA, Senior Researcher
International Scientific–Educational Center
of the National Academy of Sciences of the RA,
Chair of History, Political Science and International Relations,
PhD in History, Associate Professor, Lecturer
lilit.hovhannisyan@isec.am

ARAMO HAKHVERDYAN

International Scientific–Educational Centre of the National
Academy of Sciences of the RA,
Chair of History, Political Science and International Relations,
Master's degree student
aramo.hakhverdyan@gmail.com

Abstract

In our time, digital technologies play a crucial role in identifying historical and cultural forgeries and vandalism, preventing the manipulation of public opinion, as well as protecting and preserving historical and cultural heritage. Their role and significance increased from 2020 to 2023 due to military–political developments, as the territory of the Republic of Artsakh came under the control of Azerbaijan. Capitalising on the favourable situation in which they have appeared, the Azerbaijani authorities continue the systematic destruction, appropriation, distortion, and Albanization of the historical and cultural heritage of the Armenian Artsakh with renewed intensity. In these circumstances, digital technologies, specifically satellite photography, virtual archives, artificial intelligence, and international monitoring platforms, are the most effective tools for unveiling the policy of Azerbaijani vandalism and documenting the destruction of Armenian historical and cultural heritage. They make it possible to report the facts of Azerbaijani vandalism as well

as to expose the full ramifications of criminal behaviour and vandalism against Armenian cultural heritage.

This article provides a detailed examination of the potential of contemporary digital technologies to combat the Azerbaijani policy of forgery and vandalism, from documenting vandalism to implementing appropriate measures by international organisations. The role of digital platforms and the effectiveness of tools used to identify Azerbaijani policies of forgery and vandalism are also valued.

Keywords and phrases: Republic of Artsakh, Nakhichevan, khachkars in Jugha, Azerbaijani vandalism, satellite imagery, falsification policy, digital platform, digital technologies, Armenian historical and cultural heritage, monitoring, documentation.

ЦИФРОВЫЕ ТЕХНОЛОГИИ КАК ИНСТРУМЕНТ РАСКРЫТИЯ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ПОЛИТИКИ ВАНДАЛИЗМА И ФАЛЬСИФИКАЦИИ В ОТНОШЕНИИ АРМЯНСКОГО КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ В 2020–2024 ГОДАХ

ЛИЛИТ ОГАНИСЯН

Старший научный сотрудник Отдела истории Армянского вопроса и Геноцида армян Института истории Национальной академии наук Республики Армения
Преподаватель кафедры истории, политологии и международных отношений Международного научно-образовательного центра Национальной академии наук Республики Армения,
кандидат исторических наук, доцент
lilit.hovhannisyan@isec.am

АРАМО АХВЕРДЯН

Магистрант кафедры истории, политологии и международных отношений Международного научно-образовательного центра Национальной академии наук Республики Армения
aramo.hakhverdyan@gmail.com

Аннотация

В наши дни цифровые технологии играют ключевую роль в выявлении исторических и культурных фальсификаций и актов вандализма, предотвращении манипуляций общественным мнением, а также в защите и сохранении историко-культурного наследия. Их значение особенно возросло в 2020–2023 годах, когда вследствие военно-политических событий территория Республики Арцах перешла под контроль Азербайджана. Воспользовавшись благоприятной ситуацией, азербайджанские власти продолжают систематическое уничтожение, присвоение, искажение и албанизацию историко-культурного наследия армянского Арцаха с новой силой. В этих условиях цифровые технологии, такие как спутниковая съемка, виртуальные архивы, искусственный интеллект и международные мониторинговые платформы, являются наиболее эффективными инструментами для разоблачения политики азербайджанского

вандализма и документирования разрушений армянского историко-культурного наследия. Эти технологии позволяют фиксировать факты актов вандализма со стороны Азербайджана, а также выявлять все последствия преступных действий, направленных против армянского культурного наследия.

В настоящей статье подробно рассматривается потенциал современных цифровых технологий в борьбе с азербайджанской политикой фальсификации и вандализма, начиная с документирования актов вандализма и заканчивая принятием соответствующих мер международными организациями. Также оценивается роль цифровых платформ и эффективность инструментов, используемых для выявления политики фальсификации и вандализма, проводимой Азербайджаном.

Ключевые слова: Республика Арцах, Нахиджеван, хачкары в Джуге, азербайджанский вандализм, спутниковая съемка, политика фальсификации, цифровая платформа, цифровые технологии, армянское историко-культурное наследие, мониторинг, документирование.

Ներածություն

Պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը մշտապես եղել է ժողովուրդների պատմական հիշողության և ինքնության պահպանման կարևորագույն բաղկացուցիչներից, սակայն շարունակական հակամարտությունների, իսկ արդի շրջանում նաև տեղեկատվական պատերազմների պայմաններում դրանց պահպանման և պաշտպանության խնդիրը ձեռք է բերում առանձնակի կարևորություն: Կովկասյան տարածաշրջանը, որը հանդիսանում է տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկ, ինչպես վաղ ժամանակներում, այնպես էլ այսօր շարունակում է բախվել պատմամշակութային ժառանգության պահպանման խնդիրների հետ:

Այս հանցավոր երևույթը վառ դրսևորվել է հատկապես Ադրբեջանում, որի իշխանությունները որդեգրել են բնիկ և հարևան ժողովուրդների պատմամշակութային ժառանգության ոչնչացման, խեղաթյուրման կամ յուրացման քաղաքականություն: Այս քաղաքականության հետևանքներն ակնառու են հատկապես ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող հայկական պատմական տարածքներում (Արցախ, Նախիջևան, Ուտիք, Փայտակարան), ինչպես նաև Ադրբեջանի երբեմնի հայաշատ բնակավայրերում (Բաքու, Գանձակ, Շամախի, Պարտավ, Սումգայիթ և այլն), որտեղ ադրբեջանական իշխանությունների գործողությունների նպատակը հայկական հետքի և հայերի բնակության մասին նյութական վկայությունների ոչնչացումն է:

1990-ականներից ընդհուպ 2000-ականների կեսերը Նախիջևանում ադրբեջանական իշխանությունների նախաձեռնությամբ, զինված ուժերի կողմից իրականացվեց տեղի հայկական պատմամշակութային հուշարձանների՝ հայկական եկեղեցիների ու վանքերի, խաչքարերի, հայկական գերեզմանների համակարգված ոչնչացում: Վանդալիզմի հետքերը թաքցնելու նպատակով Ջուղայում ոչնչացված խաչքարերը թափվեցին Արաքս գետը, իսկ դրանց մի մասն էլ օգտագործվեց շինարարական աշխատանքներում: Ջուղայում

հայկական խաչքարերի ոչնչացումը հաջողվեց նկատել և տեսախցիկով լուսանկարել միայն իրանական հատվածից **[7]**: Ցավոք, այդ շրջանում Արցախյան ազատագրական պայքարի և Արցախյան 1-ին պատերազմի պատճառով Նախիջևան մուտքի արգելքը, ինչպես նաև ժամանակակից թվային տեխնոլոգիաների բացակայությունը թույլ չէին տալիս արձանագրել հայկական երկրամասի մյուս հատվածներում հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ իրականացվող վանդալիզմի գործողությունները:

Հարկ է նշել, որ նշված ժամանակահատվածում Նախիջևանի տարածքում ադրբեջանական իշխանությունների կողմից հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացումը ոչ միայն մշակութային վանդալիզմի գործողություն է, այլև միջազգային իրավունքի, այդ թվում՝ *«Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին»* ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիայի խախտման իրական ապացույց **[5]**: Սակայն այսօր ժամանակակից թվային տեխնոլոգիաները ոչ միայն նմանատիպ հանցագործությունների օպերատիվ մշտադիտարկում իրականացնելու, այլև դրանք բացահայտելու և փաստագրելու հնարավորություն են ընձեռում: Այսպես, արբանյակային լուսանկարների օգտագործումը, եռաչափ (3D) մոդելավորումը, վիրտուալ արխիվների ձևավորումը, միջազգային այնպիսի կառույցների և կազմակերպությունների (*ՅՈՒՆԵՍԿՕ* **[31]**, *Amnesty International* **[18]**, *Human Rights Watch* **[26]** և այլն) գործունեությունը, ինչպես նաև առցանց հարթակների (*Caucasus Heritage Watch* **[20]**, *Monument Watch* **[28]** և այլն) կողմից իրականացվող արբանյակային մշտադիտարկումը թույլ են տալիս արձանագրել ադրբեջանական վանդալիզմի գործողությունները հայկական պատմամշակութային հուշարձանների նկատմամբ և դրանց արդյունքները ներկայացնել համապատասխան միջազգային կազմակերպություններին:

Այսօր թվային տեխնոլոգիաները դարձել են ոչ միայն արդարության համար պայքարի, այլև ազգային պատմական և մշակութային ինքնության պահպանման կարևորագույն գործիք: Այսպիսով՝ թվային տեխնոլոգիաների դերի ուսումնասիրումն ադրբեջանական վանդալիզմի քաղաքականության բացահայտման համատեքստում արդիական է ոչ միայն հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման, այլև միջազգային նախադեպերի ստեղծման համար, որոնք կնպաստեն նման հանցագործությունների կրկնության բացառմանը:

Հետազոտության նպատակը ադրբեջանական զեղծարարության բացահայտման և վանդալիզմի գործողությունների փաստագրման գործընթացում ժամանակակից թվային տեխնոլոգիաների գործունեության արդյունավետության վերլուծումն ու գնահատումն է: Վերոնշյալ նպատակի իրականացման համար մեր կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ներկայացնել ադրբեջանական զեղծարարության և մշակութային վանդալիզմի հիմնական դրսևորումները հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ,
2. առանձնացնել ոչնչացված կամ վնասված մշակութային օբյեկտների մշտադիտարկման և փաստագրման գործընթացում կիրառվող

ժամանակակից թվային տեխնոլոգիաները,

3. գնահատել հանրապետական և միջազգային կազմակերպությունների ու անկախ հետազոտական կենտրոնների դերը և ավանդն ադրբեջանական պատմական զեղծարարության և մշակութային վանդալիզմի բացահայտման գործընթացում,
4. արժևորել արբանյակային լուսանկարների, եռաչափ (3D) մոդելավորման, վիրտուալ իրականության, արհեստական բանականության և թվային արխիվների դերը պատմամշակութային ժառանգության պահպանման գործընթացում:

Հոդվածի հետազոտության օբյեկտ է հանդիսանում հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ իրականացվող ադրբեջանական քաղաքականությունը, որն արտահայտվում է պատմության զեղծարարության և մշակութային վանդալիզմի ձևով: Հետազոտության առարկա են հանդիսանում ժամանակակից թվային տեխնոլոգիաները, որոնք լայնորեն կիրառվում են Ադրբեջանի կողմից հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ իրականացվող զեղծարարության բացահայտման, մշակութային վանդալիզմի դեպքերի մշտադիտարկման և փաստագրման աշխատանքներում:

Տեսամեթոդական հիմքերը

Հոդվածի շարադրման տեսամեթոդական հիմք են հանդիսացել հայ և այլազգի հեղինակների աշխատությունները: Դրանց թվում արժանահիշատակ են Ս.Գ. Կարապետյանի **[4],** Ռ.Ա. Գալչյանի **[10],** Վ.Գ. Թունյանի **[15],** Ա.Ա. Այվազյանի **[1],** Մ.Գ. Բալայանի **[2],** Ա.Հ. Տիգրանյանի **[6],** Կ.Ն. Բակշիի **[9],** Վ.Ա. Շնիրելմանի **[16]** և ուրիշ հեղինակների աշխատությունները: Կարապետյանը, Թունյանը, Այվազյանը, Բակշին ներկայացրել են Նախիջևանի և Արցախի հայկական պատմամշակութային հուշարձանները, դրանց պատմությունն ու ինքնատիպությունը, իսկ Գալչյանը, Տիգրանյանը և Շնիրելմանն իրենց աշխատություններում բացահայտել են ադրբեջանական զեղծարարության և վանդալիզմի քաղաքականության դրսևորման բնույթն ու հետապնդած նպատակները:

Թեմայի ուսումնասիրման տեսանկյունից աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն ինչպես միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների (ICOMOS **[27]**, *Caucasus Heritage Watch* **[20]** և այլն), այնպես էլ գիտահետազոտական կենտրոնների և անկախ ակադեմիական հարթակների (*«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ* **[3],** *Monument Watch* **[28]** և այլն) զեկույցներն ու հաշվետվությունները, արբանյակային մշտադիտարկման արդյունքում արված լուսանկարները, որոնցում փաստագրված են ադրբեջանական վանդալիզմի քաղաքականության մեխանիզմներն ու հետևանքները:

Ուսումնասիրության մեթոդներ

Ադրբեջանական զեղծարարության և վանդալիզմի բացահայտման գործում թվային տեխնոլոգիաների դերի վերաբերյալ գրականության, փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրումն իրականացվել է հետազոտության

տարբեր մեթոդներով, մասնավորապես՝ փաստաթղթերի համադրման, աշխարհատարածական վերլուծության, պատմահամեմատական վերլուծության միջոցով: Ուսումնասիրությունը կատարելիս համադրվել են պաշտոնական հաշվետվություններ, միջազգային կառույցների և կազմակերպությունների զեկույցներ ու հրապարակումներ, առցանց հարթակների մշտադիտարկման տվյալներ, ինչպես նաև տարբեր հեղինակների գիտական հոդվածներն ու աշխատությունները: Աշխարհատարածական վերլուծության մեթոդը կիրառվել է տարբեր կազմակերպությունների արբանյակային լուսանկարներում փաստագրված հայկական պատմամշակութային հուշարձանների նկատմամբ Ադրբեջանի վանդալիզմի գործողությունները վերլուծելիս: Պատմահամեմատական վերլուծության մեթոդի միջոցով համեմատական զուգահեռներ են անցկացվել տարբեր կազմակերպությունների, կառույցների և հիմնադրամների կողմից ադրբեջանական մշակութային վանդալիզմի բացահայտմանն ուղղված արբանյակային մշտադիտարկման աշխատանքների և դրանց արդյունքների միջև:

Ադրբեջանական զեղծարարության և վանդալիզմի քաղաքականության էությունն ու նպատակները

Այսօր շատ է խոսվում բռնազավթված Արցախի Հանրապետության տարբեր բնակավայրերում ադրբեջանցիների կողմից իրականացվող վանդալիզմի դեպքերի մասին: Սակայն Ադրբեջանի իշխանությունների կողմից բռնազավթած Արցախի հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ վանդալիզմ չէր իրականացվի, եթե ժամանակին միջազգային հանրությունը կոշտ արձագանքեր նույն վարչակազմի կողմից Նախիջևանում Ջուղայի խաչքարերի և հայկական մյուս պատմամշակութային օբյեկտների ոչնչացման ժամանակ: Հատկանշական է, որ ի տարբերություն հետխորհրդային առաջին երկու տասնամյակների, երբ Նախիջևանում հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացումն իրականացվում էր ծածուկ, տոտալ սահմանափակման պայմաններում՝ արգելելով որևէ միջազգային կառույցի և մոնիթորինգային խմբերի, մշակութաբանների և հուշարձանագետների՝ երկրամաս այցելությունը, այսօր նույն գործելաոճի դրսևորումներին մենք ականատես ենք լինում Արցախում, սակայն տարբերությամբ, որ շատ դեպքերում Ադրբեջանի իշխանությունները հենց ուղիղ եթերով ցուցադրում են Արցախի տարբեր բնակավայրերում պետական շինությունների և պատմամշակութային հուշարձանների ոչնչացումը: 1990-ականների վերջից 2000-ականների կեսեր Ջուղայում հայկական խաչքարերի և մյուս պատմամշակութային հուշարձանների ոչնչացումն ուղղորդվել է դրանցից որոշների՝ «աղվանականացման» քաղաքականության միջոցով յուրացմամբ **[16]:** Ադրբեջանի իշխանությունների կողմից համակարգվող և հովանավորվող այս վանդալիզմի քաղաքականությունը տասնամյակներ շարունակ միտված է եղել ոչ միայն հայկական երկրամասում հայերի մասին նյութական վկայությունների իսպառ վերացմանը, այլև մի ամբողջ ժողովրդի պատմական ինքնության զեղծարարությանը: Հարևան և բնիկ ժողովուրդների, հատկապես՝ հայերի պատմամշակութային

հուշարձանների ոչնչացմամբ կամ «վերականգնման» աշխատանքների միջոցով դրանց դիմագծի, ձևի և ոճի փոփոխմամբ Ադրբեջանը լուծում է կարևոր հոգեբանական խնդիր՝ ոչնչացնելով հակառակորդի համար սրբության խորհրդանիշները՝ հարված հասցնել հայության ամենախոցելի տեղին: Ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային շրջանում Ադրբեջանի իշխանությունների կողմից հայկական պատմամշակութային հուշարձանների նկատմամբ վանդալիզմի քաղաքականությունն իրականացվել և շարունակվում է այն հաշվարկով, որպեսզի հնարավոր լինի ամբողջությամբ վերացնել հայկական ճարտարապետության ոճն ու հետքերը՝ բացառելով դրանց հայկականության վկայման մասին որևէ փաստացի ապացույց: Եվ քանի որ մշակութային ժառանգությունն այն ստեղծող էթնոսի «անձնագիրն» է, ուստի այն ոչնչացնելու հեռահար նպատակը տվյալ էթնոսի հայրենիքի տարածքի յուրացումն է՝ դրա տիրոջ իրավունքները զրոյացնելով հանդերձ:

Թվային տեխնոլոգիաների դերն ադրբեջանական վանդալիզմի փաստագրման գործընթացում

Ժամանակակից թվային տեխնոլոգիաները, որոնք բազմաֆունկցիոնալ են, թույլ են տալիս հնարավորինս արագ և սեղմ ժամկետներում ստանալ և փոխանցել անհրաժեշտ տեղեկություններ՝ խնայելով ժամանակը, տարածությունը և ստացման համար ծախսվող միջոցները: Մեր օրերում թվային տեխնոլոգիաների զարգացվածությունը հասել է այն մակարդակի, որ այսօր կարելի է առանց ավելորդ դժվարության ոչ միայն որոնել անհրաժեշտ տեղեկությունները, այլև մշտադիտարկում անել անգամ այն վայրերում, որոնց նկատմամբ ֆիզիկական հասանելիությունը սահմանափակված է: Արբանյակային մշտադիտարկման տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում շրջակա միջավայրի իրավական պաշտպանության ապահովման **[13]** և տարածական օբյեկտների մոնիթորինգի իրականացման համար **[8]**: Բացի այդ՝ թվային տեխնոլոգիաները և հատկապես արբանյակային մշտադիտարկումը հնարավորություն են ընձեռում սեղմ ժամկետներում որոնելու, հայտնաբերելու նաև կեղծիքները, պատմամշակութային հուշարձանների, բնակավայրերի և գերեզմանների ոչնչացման հետքերը՝ անգամ եթե դրանք շատ լավ քողարկված են: Ժամանակակից թվային տեխնելոգիաները թույլ են տալիս հայտնաբերել, փաստագրել պատմամշակութային հուշարձանների, բնակավայրերի, գերեզմանների ոչնչացումը՝ հակազդելով դրանց լռեցման կամ մոռացության մատնման քաղաքականությանը **[11]:** Այսօր ադրբեջանական վանդալիզմի քաղաքականության բացահայտման գործում առավել տարածված և կիրառվող են հետևյալ թվային տեխնոլոգիաները.

• *Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը* (անգլ.՝ Geographic information system; GIS) – թվային տեխնոլոգիաների այս գործիքը հնարավորություն է ընձեռում արբանյակային մշտադիտարկման և արբանյակային լուսանկարների միջոցով հետևելու Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող Նախիջևանի և Արցախի հայկական պատմամշակութային հուշարձանների, բնակավայրերի, գերեզմանների վիճակին:

• *3D-սկանավորում և ռեկոնստրուկցիա* – թվային տեխնոլոգիաների

այս գործիքը հնարավորություն է ընձեռում ստեղծելու ադրբեջանական վանդալիզմի քաղաքականության արդյունքում ոչնչացված հայկական պատմամշակութային հուշարձանների թվային մոդելը:

• *Տվյալների բազայի միջոցով մոնիթորինգ – UNESCO World Heritage Centre* **[31]**, *CyArk* **[22]** և նմանատիպ այլ նախագծեր հնարավորություն են ընձեռում արձանագրելու և փաստագրելու Նախիջևանում և Արցախում հայկական պատմամշակութային հուշարձանների փոփոխությունները:

• *Անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ-ների) միջոցով մոնիթորինգ* – արդեն մեկ տասնամյակից ավել է, ինչ ԱԹՍ-ները կիրառվում են թե՛ ռազմական և թե՛ հետախուզական նպատակներով: Ի տարբերություն մարտական նշանակության ԱԹՍ-ների, որոնք իրենց չափսերով մի քանի անգամ մեծ են և նկատելի, հետախուզական ԱԹՍ-ները (կամ դրոնները) փոքր են և շատ դեպքերում կարող են աննկատ, անվտանգ մշտադիտարկում իրականացնել սահմանամերձ բնակավայրերում:

Նախիջևանում և Արցախում հայկական պատմամշակութային հուշարձանների, բնակավայրերի և գերեզմանների նկատմամբ ադրբեջանական վանդալիզմի քաղաքականության բացահայտման կոնտեքստում թվային տեխնոլոգիաների կիրառման դերն ու նշանակությունը մեր օրերում առավել քան արդիական է: Թվային տեխնոլոգիաներն ու արբանյակային մոնիթորինգը դարձել են այն արդյունավետ գործիքները, որոնց միջոցով ոչ միայն հայտնաբերվում են ադրբեջանական վանդալիզմի հետևանքները, այլև բացահայտվում հանցագործության կոծկված, քողարկված հետքերը: 1990 – 2000-ական թվականներին Նախիջևանում, իսկ 44-օրյա պատերազմից (2020 թ.) ի վեր նաև Արցախում Ադրբեջանի կողմից պետական մակարդակով իրականացվող զեղծարարության և վանդալիզմի քաղաքականության մասշտաբները և հետևանքները, գնալով, մեծանում են և խորանում: Նախիջևանում և Արցախում հայկական որոշ պատմամշակութային հուշարձանների ճակատագիրը մինչ այսօր անհայտ է, սակայն մեծ թվով պատմամշակութային հուշարձանների ճակատագրի, դրանց ներկայիս վիճակի վերաբերյալ տվյալներ հնարավոր է եղել ստանալ թվային տեխնոլոգիաների և արբանյակային լուսանկարների միջոցով: Հետխորհրդային առաջին երկու տասնամյակների ընթացքում սեփական արբանյակ չունենալու հանգամանքը կաշկանդող գործոն չի հանդիսացել Նախիջևանում ադրբեջանական վանդալիզմի քաղաքականության հետևանքների բացահայտման, դրանց փաստագրման և պետական մակարդակով իրականացվող այդ հանցավոր գործունեության մասին միջազգային հանրությանն իրազեկելու համար: Արդի շրջանի թվային տեխնոլոգիաները և հատկապես արբանյակային մոնիթորինգը (մշտադիտարկումը) լայն հնարավորություն են ընձեռում անարգել տեսանկարահանելու աշխարհի ամենահեռավոր և նույնիսկ անմարդաբնակ հատվածները: Դրանք մեզ հնարավորություն են ընձեռում նաև գրեթե իրական ժամանակամիջոցում հետևելու հայաթափված Նախիջևանում և Արցախում իրականացվող վանդալիզմի քաղաքականության դրսևորումներին և դրանց հետևանքներին: Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման

միջազգային խորհուրդը (անգլ.՝ International Council on Monuments and Sites; ICOMOS), որը հիմնվել էր դեռևս 1965 թ. Ֆրանսիայում (Փարիզ), տեղեկանալով Նախիջևանում Ջուղայի խաչքարերի զանգվածային ոչնչացման մասին, *«Digital Globe»* արբանյակի միջոցով մշտադիտարկում իրականացրեց Ջուղայի տարածքում՝ համեմատելով ստացված արբանյակային լուսանկարները 2003 թ. լուսանկարների հետ: Այդ լուսանկարներում դեռևս նկատելի էին հայկական խաչքարերը **[12]:** 2009 թ. արբանյակային լուսանկարի միջոցով ֆրանսիացի մասնագետները պարզեցին, որ Ջուղայի գերեզմանների տարածքն ամբողջությամբ վերածվել է ադրբեջանական զորանոցի և հրաձգարանի **[17]:** Նախիջևանի տարածքում ադրբեջանական վանդալիզմի քաղաքականության հանցավոր հետևանքների բացահայտումներ եղան նաև հետագա տարիներին: Վերջին շրջանում տարբեր միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների և գիտահետազոտական կենտրոնների կողմից պարբերաբար հրապարակվում են Արցախում ադրբեջանական վանդալիզմի մասին փաստագրող արբանյակային լուսանկարներ, որոնցից պարզ է դառնում, որ ադրբեջանական վանդալիզմի զոհ են դառնում ոչ միայն Արցախի հայկական պատմամշակութային հուշարձանները, այլև հայկական բնակավայրերն ու գերեզմանները: Արցախում ադրբեջանական վանդալիզմի գործողությունների բացահայտման և դրանց մասին միջազգային հանրությանն իրազեկման ուղղությամբ ակտիվ աշխատանքներ է իրականացնում հատկապես Քորնելի համալսարանի *«Caucasus Heritage Watch» (հայ.՝ «Կովկասի ժառանգության մշտադիտարկում»)* հետազոտական նախաձեռնությունը: Իր տարբեր հրապարակումներում «Կովկասի ժառանգության մշտադիտարկում»-ը ահազանգել է բռնազավթված Արցախի Հանրապետության հայկական տարբեր պատմամշակութային հուշարձանների, բնակավայրերի և գերեզմանների ոչնչացման մասին: Ընդ որում, հետազոտական նախաձեռնությունն ակտիվ աշխատանքներ է իրականացնում նաև հայաթափված Նախիջևանում ադրբեջանական վանդալիզմի քաղաքականության զոհ դարձած հայկական պատմամշակութային հուշարձանների հետքերի հայտնաբերման և միջազգային հանրությանն այդ հանցագործությունների մասին իրազեկման ուղղությամբ **[21]**: Իր հրապարակումներից մեկում «Կովկասի ժառանգության մշտադիտարկում»-ը բացահայտել է, որ 1997 – 2011 թթ. ընկած ժամանակահատվածում Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում հիմնովին ոչնչացվել են 108 հայկական եկեղեցի, վանք և գերեզմանոց **[29]**: 2020 թ. նոյեմբերին ադրբեջանական զինված ուժերի կողմից Շուշին բռնազավթելուց հետո 1818 թ. կառուցված Կանաչ ժամն առաջին հուշարձաններից էր, որը ենթարկվեց վանդալիզմի, ինչի արդյունքում եկեղեցու գմբեթը պայթեցվեց: 2024 թ. ապրիլին «Կովկասի ժառանգության մշտադիտարկում» կայքը հրապարակեց արբայնակային լուսանկարներ, որոնցից պարզ երևում էր, որ եկեղեցին այլևս չկա: Դատելով արբանյակային լուսանկարներից, կարելի էր ենթադրել, որ 2024 թ. փետրվարի դրությամբ եկեղեցին հիմնովին ոչնչացված էր **[25]**: Նմանատիպ ճակատագիր ունեցավ նաև Բերձորի Սբ. Համբարձում եկեղեցին, որը սկզբում ադրբեջանական իշխանությունները նախատեսում էին «վերականգնման»

աշխատանքների միջոցով մզկիթի վերածել: 2022 թ. օգոստոսի 25-ին Բերձոր քաղաքը և Սբ. Համբարձում եկեղեցին, որը կառուցվել էր 1998 թ., հանձնվեցին Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողությանը: 2024 թ. մայիսի 11-ին համացանցում տարածվեց արբանյակային լուսանկար, որտեղ հստակ երևում է, որ Ադրբեջանը հիմնովին ավերել է Բերձորի Սբ. Համբարձման եկեղեցին: Այսօր Ադրբեջանի իշխանությունները եկեղեցու տեղում իրականացնում են մզկիթի կառուցման շինարարական աշխատանքներ **[14]**: 2020 թ. 44-օրյա պատերազմից ի վեր «Կովկասի ժառանգության մշտադիտարկում»-ը հրապարակել է բռնազավթված Արցախի Հանրապետության տարածքում հայկական պատմամշակութային հուշարձանների **[30]**, բնակավայրերի **[19]**, գերեզմանների **[23, 24]** ոչնչացման բազմաթիվ արբանյակային լուսանկարներ, որոնք վկայում են այն մասին, որ Արցախում ադրբեջանական վանդալիզմը լայն թափով է իրականացվում՝ անտեսելով միջազգային հանրության, միջազգային կառույցների և կազմակերպությունների, ինչպես նաև ազդեցիկ պետությունների կոչերը: Այսպիսով, ամփոփելով թվային տեխնոլոգիաների դերն ադրբեջանական զեղծարարության և վանդալիզմի քաղաքականության բացահայտման գործում, արձանագրենք, որ 44-օրյա պատերազմից ի վեր ինչպես հայ մասնագետների, այնպես էլ արտասահմանյան գործընկերների կողմից ծավալուն աշխատանքներ են իրականացվում բռնազավթված Արցախի Հանրապետության տարածքում ադրբեջանական վանդալիզմի հետևանքների փաստագրման ուղղությամբ: Այս առումով թվային տեխնոլոգիաները և հատկապես արբանյակային մոնիթորինգը կարևոր դեր են խաղում, քանի որ հնարավորություն են տալիս բացահայտելու, փաստագրելու և միջազգային հանրությանը ներկայացնելու ադրբեջանական մուլտիկուլտուրալիզմի (բազմամշակութայնության) իրական դեմքը և վանդալիզմի քաղաքականության հետևանքները:

Եզրակացություն

Ժամանակակից թվային տեխնոլոգիաների միջոցով հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ ադրբեջանական զեղծարարության և վանդալիզմի քաղաքականության ուսումնասիրումը լրացուցիչ, առավել համակողմանի և հանգամանալից նյութ է ապահովում՝ հիմնավորելու, որ բռնազավթված Արցախի Հանրապետության տարածքում ադրբեջանական քաղաքականությունը Նախիջևանում իրագործված նույն հանցավոր քաղաքականության անպատժելիության հետևանքն է: Նախիջևանում և Արցախում հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ զեղծարարության և վանդալիզմի քաղաքականության էությունը չի փոխվել: Նպատակը մեկն է՝ անհետ մաքրել հայերի մասին նյութական վկայությունները:

Ադրբեջանական վանդալիզմի հանցավոր էության բացահայտման, փաստագրման գործում ժամանակակից թվային տեխնոլոգիաների դերն ու կիրառման անհրաժեշտությունն արդիական են և հրատապ: Ի տարբերություն Նախիջևանում հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացման շրջանի (1990 – 2000-ական թթ.), երբ թվային տեխնոլոգիաներն այդքան էլ զարգացած չէին, 2020 թ. 44-օրյա պատերազմից ի վեր իրականացվող

ադրբեջանական վանդալիզմի քաղաքականությունը մշտապես գտնվում է արբանյակային մոնիթորինգի ներքո, իսկ հանցավոր գործողությունները փաստագրվում և ներկայացվում են միջազգային կառույցներին՝ միջազգային-իրավական հիմք ապահովելով Ադրբեջանին քաղաքական, իսկ նրա պաշտոնատար անձանց՝ քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ թվային տեխնոլոգիաների, արբանյակային մոնիթորինգի միջոցով հայաթափված Նախիջևանում և Արցախում ադրբեջանական բարբարոսությունների «հետքերի» բացահայտումը, փաստագրումը և դրանք միջազգային հանրությանը ներկայացնելը բավարար չեն: Իհարկե, հայկական պատմամշակութային հուշարձանների, բնակավայրերի, գերեզմանոցների նկատմամբ ադրբեջանական վանդալիզմի քաղաքականության հետևանքների մասին պետք է իրազեկված լինի քաղաքակիրթ աշխարհը, սակայն Ադրբեջանում իշխող վարչակազմի հանցավոր գործողությունները կասեցնելու, ավերված հայկական պատմամշակութային հուշարձանները վերականգնելու հնարավորություններ ստեղծելու համար բոլորովին այլ ռազմավարական մոտեցումներ և գործիքներ են հարկավոր:

Արբանյակային նկարահանումների, եռաչափ (3D) մոդելավորման, վիրտուալ իրականության, արհեստական բանականության և թվային արխիվների դերը նաև կարևոր է հայկական պատմաճարտարապետական հուշարձանների մասին հնարավորինս ամբողջական և համակողմանի տեղեկույթը հավաքելու և արխիվացնելու տեսանկյունից, քանի որ դրանք հետագայում՝ Նախիջևանն ու Արցախն Ադրբեջանի վերահսկողությունից ազատագրվելու դեպքում կարող են օգնել վերականգնելու հայկական պատմամշակութային ժառանգությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Այվազյան, Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները : (Համահավաք ցուցակ), Երևան, «Հայաստան», 1986. – 223 էջ:
2. Մ. Բալայան, ԼՂԻՄ-ում Ադրբեջանի իրականացրած քաղաքականությունը Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ 1920-30-ական թթ. և հետևանքները, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2020, № 29, էջ 321-328:
3. «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի պաշտոնական կայք-էջ, https://geghard-saf.am/ (դիտված՝ 25. 03. 2025):
4. Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան : ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999. – 288 էջ:
5. «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիա, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75870 (ընդունված՝ 16. 11. 1972):
6. Ա. Տիգրանյան, Արցախի հայկական մշակութային ժառանգությունը. պաշտպանության մեխանիզմները ժառանգության պահպանության միջազգային համակարգում, Երևան: «Լուսակն», 2023. – 300 էջ:
7. Азербайджанские вандалы на армянском кладбище, https://www.youtube.com/watch?v=yF_eII9-zBw&ab_channel=azgapahhayoc (դիտված՝ 25. 03. 2025).
8. Ашуров А., Ермеков Ф., Ергалиев Д., Применение технологии высокоточной спутниковой навигации для мониторинга пространственно-протяженных объектов, Труды Международного симпозиума «Надежность и качество», vol. 2, 2017, с. 38 – 41.
9. Бакши К., Духовные сокровища Арцаха, Москва : Книжный мир, 2012. – 320 с.

10. Галчян Р., Азербайджанские историко-географические фальсификации : историко-культурное и картографическое исследование, Москва ; Ключ-С, 2013. – 208 с.
11. Набатова А., Цифровые технологии в противодействии преступности: перспективы использования // Известия Гомельского государственного университета имени Ф. Скорины. Сер.: Социально-экономические и общественные науки. – 2024. – № 2 (143). – с. 80 – 85.
12. Новые фотографии со спутника о вандализме Азербайджана в отношении армянских хачкаров в Джуге, Armenpress, https://armenpress.am/ru/article/638809 (դիտված՝ 25. 03. 2025).
13. Пёрди Р., Использование технологий спутникового наблюдения для обеспечения правовой защиты окружающей среды, Охрана окружающей среды и качество жизни: правовые аспекты, № 2011, 2011, с. 203 – 207.
14. Строящаяся в Лачине мечеть будет одним из крупнейших храмов на освобожденных от оккупации территориях, Azertac, https://azertag.az/ru/xeber/stroyashchayasya_v_lachine_mechet_budet_odnim_iz_krupneishih_hramov_na_osvobozhdennyh_ot_okkupacii_territoriyah__foto-2837335 (դիտված՝ 25. 03. 2025).
15. Тунян В., Фальсификация истории восстановления армянской государственности в азербайджанской историографии, Ереван : Изд-во ЕГУ, 2018. – 396 с.
16. Шнирельман В., Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье, Москва: Академкнига, 2003. – 592 с.
17. Accountability for Destruction of Cultural Heritage: The case of Jugha, Fundamental Armenology, 2015, №2. – pp. 415 – 422.
18. Amnesty International-ի պաշտոնական կայք-էջ, https://www.amnesty.org/en/ Caucasus Heritage Watch-ը հայտնել է հայերի տեղահանումից հետո Արցախում ավերածությունների 75 տոկոս աճի մասին, Armenia Today, https://armeniatoday.am/hy/republicofartsakh/760362/ (դիտված՝ 25. 03. 2025):
19. Caucasus Heritage Watch-ի պաշտոնական կայք-էջ, https://caucasusheritage.cornell.edu/ (դիտված՝ 25. 03. 2025).
20. CHW Releases Special Report on Cultural Erasure in Nakhchivan, Azerbaijan, Caucasus Heritage Watch, https://caucasusheritage.cornell.edu/?p=800 (դիտված՝ 25 03 2025).
21. CYARK-ի պաշտոնական կայք-էջ, https://www.cyark.org/ (դիտված՝ 25. 03. 2025).
22. Damage Alert: Cemetery near Vazgenashen / Hajisamly, Caucasus Heritage Watch, https://caucasusheritage.cornell.edu/?p=1405 (դիտված՝ 25. 03. 2025).
23. Destruction alert: Ghazanchetsots cemetery, Shusha/Shushi, Caucasus Heritage Watch, https://caucasusheritage.cornell.edu/?p=1593 (դիտված՝ 25 03. 2025):
24. Destruction alert: St. John the Baptist church, Shusha/Shushi, Caucasus Heritage Watch, https://caucasusheritage.cornell.edu/?p=1588 (դիտված՝ 25. 03.. 2025):
25. Human Rights Watch-ի պաշտոնական կայք-էջ, https://www.hrw.org/ (դիտված՝ 25. 03. 2025).
26. International Council on Monuments and Sites (ICOMOS)-ի պաշտոնական կայք-էջ, https://www.icomos.org/en (դիտված՝ 25. 03. 2025).
27. Monument Watch-ի պաշտոնական կայք-էջ, https://monumentwatch.org/hy/ (դիտված՝ 25. 03. 2025).
28. Silent Erasure. A Satellite Investigation of the Destruction of Armenian Cultural Heritage in Nakhchivan, Azerbaijan, Caucasus Heritage Watch, https://storymaps.arcgis.com/stories/48703f664f2f467b8f4f42008d8c75da (դիտված՝ 25. 03. 2025):
29. Smith A., Khatchadourian L., Lindsay I., Monitoring Heritage At Risk: Caucasus Heritage Watch and the Armenian Monuments of Nagorno-Karabakh, Systemising the Past, March 2023. – pp.428 – 439.
30. UNESCO World Heritage Centre-ի պաշտոնական կայք-էջ, https://whc.unesco.org/ (դիտված՝ 25. 03. 2025).